

Ն. Ներսէս վ. Տիրացուեան իբ 21/7/1907 թ. նամակով : Տապանաքարին վրայ կը կարգացուի հետեւեալ պարզ արձանագրութիւնը .

D. O. M.  
Catharina Corneliae  
Cypri Hierosolymorum  
ac Armeniae reginae  
c ineres

այսինքն՝ « ՈՐ ԷՆ. Կատարինէ Կորնարոյի՝ Կիպրոսի , Երուսաղէմի եւ Հայաստանի թագուհւոյն աճիւնք : » Այս վերջին բառն անոր համար դրուած է , որովհետեւ Կատարինէի մարմինը նախ եւ առաջ թաղուած է Ս. Առաքելոց եկեղեցին , բայց դար մը ետք՝ նորոգութեան ժամանակ՝ աճիւնները փոխադրուած են Ս. Փրկիչ (1) :

Կատարինէ Վենետիկ փոխադրուելէ ետք ապրած է Ազոլոյի մէջ , որ անոր ընծայուած է կառավարութեան կողմէ . իսկ մահը պատահած է Վենետիկ , իր հօրենական տունին մէջ :

Հայոց ախոզոսաւոր թագուհիին Ազոլոյի պալատը թանգարանի եւ քաղաքային վարչատունի վերածուած է հիմա :

\* \* \*

Կիպրոսի թագաւորներուն « Հայոց թագաւոր » ախոզոսը կրելնուն իբր ապացոյց՝ կարելի է յիշատակել այս վերտառութեամբ բազմաթիւ գրամներու գոյութիւնը , որոնք կը պատկանին Յանոսի , Յովհաննէս Բ-ի , Լուզովիկոսի , Յակոբ Բ-ի , Կատարինէ Կորնարո-Յակոբ Գ-ի (միասին) , եւ Կատարինէ Կորնարոյի (առանձին) : Այս վերջինիս մէկ զրամը տեսանք վերը . իսկ ուրիշ օրինակ մըն ալ տալու համար այս անգամ առնենք Յակոբ Բ-ը , որուն գրամներուն վրայ կը կարգանք . « IAC · O · BS DEI G · » իսկ միւս կողմը՝ « R · IERVS · CIPRI · ET ARMIA · » այսինքն՝ « Յակոբ , շնորհիւն Աստուծոյ , թագաւոր Երուսաղէմի , Կիպրոսի եւ Հայաստանի(2) » : Նոյնպէս եւ

(1) Կատարինէ Կորնարոյի մասին ընդարձակ յօդուած մը գրած է Բազմալիկայի 1898—99 տարիներուն մէջ Վեր. և Յովհ. վ. Թորոսեան : Իսկ Կիպրոսի Լուսինեաններու մասին նոյն հանդէսի 1881—82 տարիներուն մէջ ամփոփ տեսութիւն մը հրատարակուած է : Մասնաւորապէս կը յանձնարարեմ կարգալ Բախուրանի « Կիպրոս կղզի » ընտիր գործը :

(2) Տե՛ս Collection de M. Charles de l'Écluse. *Monnaies orientales* . Պարիս 1888 , եր. 92 : Տե՛ս նաեւ Շլոմբերգերի « Լասին Արեւելի դրամագիտութիւն »-ը , եր. 197—204 :